

Ի՞նչ է գործարար ղեկավարման մագիստրոսի կոչումը և որտեղ է այն կիրառվում

Գործարար ղեկավարման մագիստրոսի կոչումը, որը հայտնի է MBA (Master of Business Administration) հապավումով, համապարփակ գիտելիքների մի համակարգ է որը տալիս է հնարավորություն՝ արդյունավետ կառավարելու մանր, միջին և խոշոր բիզնեսը: Ըստ էության՝ այս կոչումը ամերիկյան եռաստիճան բարձրագույն կրթական համակարգի երկրորդ աստիճանի ավարտական վկայականն է, որը տալիս է բիզնեսի պրոֆեսիոնալ կառավարչի որակավորում: Այս կոչումը չի համարվում գիտական և նախատեսված է գործարար միջավայրում գործնական կիրառման համար:

Որպեսզի ընթերցողը ունենա ավելի ճիշտ պատկերացում այս ամենի մասին, տեղին են համարում մի փոքր անդրադարձ կատարել ամերիկյան եռաստիճան կրթական համակարգի ուսումնական փուլերին, որոնք ներկայումս իրենց կիրառությունն են գտնում մեր կրթական համակարգում: Սկսեմ նրանից, որ համակարգը, որը բաղկացած է բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտրանտուրա ուսումնական փուլերից, ունի իր հստակ տարանջատումը ինչպես գիտելիքների ստացման, այնպես էլ այդ ստացած գիտելիքների կիրառման տեսանկյունից: Բակալավրիատը, որի տևողությունը 4 տարի է, ըստ էության, միջնակարգ դպրոցին հաջորդող բարձրագույն ուսումնական կրթական փուլի առաջին մասն է, որը պատրաստում է տվյալ մասնագիտության կամ ոլորտի համար բավարար գիտելիքներով մասնագետների, որոնք կարող են աշխատել իրենց բնագավառներում՝ որպես սկսնակ մասնագետներ: Որպես կանոն՝ աշխատանքային այս փուլում այս մասնագետները չեն ստանձնում պատասխանատու պաշտոններ և բավարարվում են զանազան ռուտին աշխատանքներով, որոնք բնորոշ են իրենց ստացած մասնագիտություններին: Աշխատելով 2-3, շատ դեպքերում նաև 5 տարի այդ պաշտոններում՝ անհատը հնարավորություն է ունենում կողմնորոշվելու իր հետագա կարիերայի և պլանների մասին: Անհատը այս էտապում ինքն է որոշում՝ շարունակել կրթությունը՝ դիմելով մագիստրատուրա և պատրաստվել ավելի պատասխանատու պաշտոններ ստանձնելու համար, թե՞ բավարարվել ներկա կարգավիճակով և հանգիստ շարունակել իր աշխատանքային գործունեությունը տվյալ բնագավառում: **Մագիստրատուրան, ըստ էության, չի համարվում բակալավրիատի ոչ պարտադիր և ոչ էլ իներցիոն շարունակությունը, այլ այն նախատեսված է պատրաստելու պրոֆեսիոնալների, որոնք հետագայում պետք է զբաղեցնեն պատասխանատու պաշտոններ իրենց բնագավառներում:**

Մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի տևողությունը շատ դեպքերում 2 տարի է և որպես կանոն՝ կառուցված է ինչպես բակալավրիատի, այնպես էլ հետբակալավրիատյան աշխատանքային փորձի և գիտելիքների հիման վրա: Մեծամասամբ այդ ծրագրերը բավականին բարդ են և խիստ խտացված, ընդհուպ այնպիսին, որն ուսանողին պարտադիր կերպով ստիպում է իր ժամանակի 60-70% տրամադրել ուսուցմանը: Գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերը պատրաստում են **առևտրային կազմակերպությունների պրոֆեսիոնալ կառավարիչների (managers)**, որոնք կարող են իրենց գիտելիքներն օգտագործել կազմակերպության կառավարման ինչպես միջին, այնպես էլ վերին օղակներում: Մագիստրատուրաները կարող են գործել և՛ որպես համալսարանների համապատասխան կրթական ստորաբաժանումներ և՛ որպես առանձին կրթական միավորներ՝ շնորհելով միայն մագիստրոսի կոչումներ այս կամ այն մասնագիտության մասով: Երբեմն մագիստրատուրաները հանդես են գալիս որպես ինքնուրույն առևտրային դպրոցներ (չփոթել միջնակարգ դպրոցի հետ), որոնք իրավասու են շնորհելու մագիստրոսի կոչումներ համապատասխան մասնագիտությունների մասով: Օրինակ, և՛ ԱՄՆ –ում և՛ Եվրոպական շատ երկրներում կան շատ ճանաչված գործարար ղեկավարման դպրոցներ (Business Schools), որոնք գործարար շրջանակներում հայտնի են որպես բիզնեսի պրոֆեսիոնալ կառավարչների

պատրաստման դարբնոցներ: Այս դպրոցների շրջանավարտներն ունեն մեծ պահանջարկ և որպես կանոն՝ համարվում են բավական բարձր վարձատրվող մասնագետներ:

Ամերիկյան կրթական համակարգի եռաստիճան բուրգի վերջին փուլը դոկտրանտուրան է, որն, ի տարբերություն մագիստրատուրայի, պատրաստում է ոչ թե պրոֆեսիոնալների, այլ գիտնականների, որոնք հետագայում զբաղվում են գիտական, կրթական և վերլուծական աշխատանքներով: Գիտական կոչումը, որը շնորհում են ամերիկյան կրթական հաստատությունները, տևում է 3 - 4 տարի: Այն հայտնի է որպես Ph.D., (Philosophy Doctor, թարգմանաբար “Փիլիսոփայության Դոկտոր”) հապավումով: Վերջինս, ըստ կրթական բնագավառի մասնագետների, գրեթե համընկնում է Խորհրդային կրթական համակարգի Գիտությունների Թեկնածու գիտական կոչման հետ և համարվում է բարձր ներկայիս մագիստրոսի կոչումից: Պետք է նշեմ նաև, որ ի տարբերություն Խորհրդային և Եվրոպական երկրների կրթական համակարգերի՝ ամերիկյան կրթական համակարգում բացակայում է Գիտությունների Դոկտոր գիտական կոչումը, սակայն ինքնին Ph.D. կոչմանն արժանանալու համար ասպիրանտներն ուսումնական գործընթացում յուրացնում են մեծ ծավալի գիտական գրականություն և ուսումնասիրում են զանազան ուսումնական նյութեր, որոնք առնչվում են իրենց մասնագիտական բնագավառին: Ուսումնական պրոցեսը ավարտվում է պարտադիր գիտական դիսերտացիայի պաշտպանությամբ, որին հետևում է պատվավոր Ph.D. գիտական կոչման շնորհումը:

Կարծում եմ ընթերցողին կհետաքրքրի նաև ստանալ տեղեկատվություն Հայաստանում գործող ամերիկյան կրթական մոդելի ուսումնական հաստատության մասին: Ասեմ, որ Հայաստանում, 1991 թ. – ից սկսած, գործում է Հայաստանի Ամերիկյան Համալսարանը, որն իր ստեղծման առաջին օրից, առաջարկել է մագիստրոսի կոչում շնորհող ուսումնական տարբեր ծրագրեր, այդ թվում նաև Հայաստանում միակ Գործարար Ղեկավարման Մագիստրոսի (MBA) կոչում շնորհող ծրագիրը: Ասեմ ավելին, ստեղծման պահին Հայաստանի Ամերիկյան Համալսարանը համարվում էր միակ արևմտյան մոդելի բարձրագույն ուսումնական հաստատությունը նախկին Խորհրդային Միության ողջ տարածքում: Կարծում եմ, այն դեռևս մնում է միակ նմանատիպ բարձրագույն ուսումնական հաստատությունը Անդրկովկասում: Հայաստանի Ամերիկյան համալսարանում ուսումնական ծրագրերն անցկացվում են միայն անգլերենով, և դասավանդում են հրավիրված պրոֆեսորներ արևմտյան տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններից: Նշեմ նաև, որ Հայաստանի Ամերիկյան Համալսարանը հանդիսանում է Կալիֆորնիայի Պետական Համալսարանի ուսումնական գործընկերը, ստանալով տարբեր բնույթի ուսումնական և գործնական աջակցություն այդ ճանաչված կրթական հաստատությունից:

Բարկեն Մկրտչյան (MBA)

18 Մարտ 2006թ.



Mr. Mkrtychyan is an MBA graduate (Year 2003) from American University of Armenia with more than 10 years of active work experience in marketing, company administration, business development and staff training. Currently, he holds a position of a Regional Vice – President to Armenia for an internationally recognized US based Management Consulting company- “Aginsky Consulting Group”. He had also worked for a famous German based wholesaler *WURTH Armenia*, by being responsible for the company’s regional developments in Gyumri and Vanadzor. In addition, Mr. Mkrtychyan is a Small Business Owner and the General Manager for a small enterprise established in 1992 in Gyumri.